

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(Բանաստեղծի մահվան 150-ամյակի առթիվ)

Վ. Հ. ՓԱՐԹԱՄՅԱՆ

Համաշխարհային դրականության մեծերից է անգլիական հուշակավոր քանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը: Նա ստեղծագործեց նապոլեոնյան արշավանքների օրերին և Սրբազան դաշինքի տիրապետության պայմաններում, նրբ առավել ակնհայտ էին դարձել մարդկային իրավունքների ոտնահարումը և ազատության կաշկանդումները: Իր ազատ խոսքի ու համարձակ մտքերի համար հալածվել էր հայրենի երկրում ու վտարանդի դարձել, զրկվել ընտանիքից:

Բայրոնը չհաշտվեց արիստոկրատական Անգլիայի հետ: Նա կառավարական ամբիոնից պաշտպանեց ազատագրման համար պայքարող իռլանդացիներին ու սոցիալական կռվի դուրս եկած լուդիտներին: Իտալիայում մասնակցեց Ավստրիայի տիրապետության դեմ ուղղված կարբոնարների շարժմանը, հանդիսացավ նրա ղեկավարներից մեկը: Կարբոնարների պարտությունից հետո Բայրոնը մեկնեց Հունաստան և իր կյանքը զոհաբերեց օսմանյան բռնակալության դեմ հույն ազատասերների մղած կռվին: Բանաստեղծն ապրեց օրվա մեծ իրադարձություններով և իր ստեղծագործություններով դարձավ ժամանակի առաջադիմական ձգտումների արտահայտիչը:

Դեռևս առաջին ժողովածուն՝ «Պարապոլյան ժամերը», ցույց տվեց կյանքի լճացման դեմ պայքարող արվեստագետին ու մտածողին, իսկ լորդերի պալատում արտասանած նրա ճառերը մերկացրին պաշտոնական քաղաքականության հակաժողովրդական էությունը:

Բայրոնի առաջին մեծածավալ ստեղծագործությունը եղավ «Չայլդ Հաշոդի ուխտագնացությունը», որի հերոսը շրջեց Եվրոպայի ստրկացած ու ազատագրության համար մարտնչող երկրներով, խորհրդածեց վերջիններիս բախտի մասին, իր դատապարտող խոսքն ասաց Եվրոպայի անցյալի ու ներկալի վերաբերյալ, ցավեց բռնության տակ հեծող ժողովուրդների համար, ուրախացավ նրանց պայքարով:

Բայրոնը, սակայն, բավարարված չէր հարուղյան հայեցողականությամբ: Նա հաճախ կանխում էր իր հերոսին, ինքն էր մասնակցում պոեմի ընթացքին ու զաղափարապես սրում այն: Բանաստեղծը ստեղծեց ըմբոստ իր հերոսներին՝ Գլավուրին, Կոնրադին («Ծովահենը»), Լարային, Հյուգոյին ու Փարիզիային («Փարիզիս»)։ Նրանք հպարտ են ու խիզախ, անհաշտ՝ բռնության ամեն մի դրսևորման նկատմամբ և անհավասար կռվի են դուրս գալիս՝ թո՞վափելու հոգևոր ու մարմնական կապանքները: Ինչ-որ վեհություն կա նրանց նպատակին ինքնամոռացորեն ձգտելու, անձնուրաց վրիժառու-

թյան մեջ: Դրա հետ միասին, նրանք եսակենտրոն միայնակներ են, որոնց խիզախությունը հագեցած է սեփական անձի գերադանցության զգացումով:

Այդ անհատապաշտությունը Բայրոնը մասամբ հաղթահարեց «Կորինթոսի պաշարումը» պոեմում, բայց առավել խորությամբ՝ «Հրեական մեղե-



դիներ» ժողովածուում, ուր տրված է ոչ թե մեկ ժողովրդի, այլ ընդհանրապես ազատասիրության գովքը: Այստեղ իշխում է սենսեքերիմների պարտության և Հեփթայի դուստրերի ավետաբեր անձնագոհության հավատը, որը մարմնավորվեց նաև «Շիլիոնի կալանավորի» մեջ:

Սակայն իրականության հետ հեղափոխական ուժմանտիկի հակասությունները միշտ նորանոր դրսևորումներ են ստացել: Դրանք մերթ հուսահատության մորմորներ էին դառնում ու մերթ՝ հպարտ ընդվզումներ, մերթ՝ ատելության պոռթկում ու մերթ՝ քաջության դովերգում: Հոգեվիճակների այս տարուբերումները օրերի խռովքն ապրող բանաստեղծի բուռն արձագանքներն էին, որոնք փոխնիփոխ հանգում էին

խավարի համատարած տիրապետության զաղափարին կամ երկնքի ու երկրի տիեզերակործան հուսահատության, միաժամանակ Պրոմեթեոսի ձոներգման կամ ժամանակակից «բրոնզի դարի» սարկաստիկ պատկերման:

Բայրոնի անհատապաշտական զաղափարների համադրությունն է «Մանֆրեդ» դրամատիկական պոեմը, որտեղ համանուն հերոսը, որպես ուրույն մի Ֆաուստ, չի վախճողանում հաշտվել իրականության գորշության հետ, մերժում է կրոնի ու պասիվ դատողականության հաշտվողականությունը: Նա թեև կործանվում է, բայց բարձունքի վրա կանգնած, միայնակ առյուծի պես:

Այդպիսին է և Բայրոնի Կայենը («Կայեն» դրամատիկական պոեմում), որը ատում է ստորաքարշությունը, մեղկ հպատակությունը: Նա ձգտում է բացարձակ ազատության՝ ընդդիմանալով աստվածային կանոններին: Նա չարիքի սերմանողը չէ, ոչ էլ առաջին նյութական դրյալ մարդասպանը, ինչպես այդ մեկնաբանվել է Աստվածաշնչում և գրական շատ մշակումների մեջ, այլ մի անհատականություն, որի ոճիրը, վերջին հաշիվով, բռնության թելադրող հանդամանքների արդյունքն է:

Բայրոնի ուժմանտիկական որոնումները ավելի շատ «հողեղեն» շիման եզրեր ունեցան «Դոն Ժուան» անավարտ մնացած պոեմում, որտեղ վերին խավերում իշխող կեղծիքին ու երեսպաշտությանը հակադրվում են կենսախնդրությունն ու մարդասիրությունը, բուրժուական անհագ շահամոլությանը՝ կյանքը լիառատ ապրելու բուռն սուենը:

Բայրոնի ստեղծագործության մեջ զրուցող հեղափոխական ուսման-
տիզմի այս ինքնուրույն արտահայտությունն իրավամբ բայրոնիզմ անվանվեց:
Դա ոչ միայն գեղագիտական հասկացությունների մի ամբողջություն էր են-
թացաբար, այլև մի ուրույն կենսահասկացություն, իրականության ընկալման մի
լինքնատիպ մոտեցում: Բայրոնի ստեղծագործության մեջ առկա իրարամբեր
թվացող հասկացություններն ու հոգեվիճակները, անշուշտ, տարբեր մեկ-
նաբանությունների դուռ էին բացում, բայց հանրագումարում տիրապետող
միշտ էլ անհաշտությունն էր, անբավականությունը կյանքի անձուկից, ըմ-
բոսությունը բռնության դեմ և լուսավոր կյանքի անհազ ձգտումը:

Բայրոնի ստեղծագործության հարուստ ու բազմազան բովանդակու-
թյունը յուրովի բեկվեց տարբեր գրականությունների մեջ: Բայրոնիզմի գե-
ղագիտությունն ու կենսազգացողությունը տարբեր ժամանակ, տարբեր ար-
ձագանք ու մեկնաբանություն են ստացել նաև հայ գրական ու գրականա-
դիտական մտքի կողմից:

Հայ-անգլիական երկդարյա գրական առնչությունների մեջ, Շեքսպիրից
հետո Բայրոնն է այն դրողը, որ լայն ճանաչում է գտել մեր գրական կյան-
քում: Անշուշտ, հատկանշական է նաև այն, որ Բայրոնը սերտ հարաբերություն-
ներ է ունեցել հայ կյանքի ու մշակույթի հետ: Հայտնի է, որ նա հայերեն է
ուսանել Մխիթարյանների մոտ, Ս. Ղազար կղզում, թարգմանություններ է
կատարել հայերենից (խորենացու «Հայոց պատմության» Ը և Թ գլուխները,
Համբրոնացու «Ատենաբանությունից» հատվածներ, Պողոս առաքյալի «Թղ-
թերը» կորնթացիներին), աչակցել է անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն
քերականությունների, հայերեն-անգլերեն բառարանի պատրաստմանն ու
հրատարակմանը, գրել է այն նշանավոր առաջաբանը («Քերականություն
հայերեն և անգլիական» գրքի համար), որտեղ ոչ միայն հայոց պատմու-
թյան ընդհանուր ակնարկը կա, այլև հայ ժողովրդի ազատագրության գա-
ղափարը: Փաստ է նաև այն, որ «Մանֆրեդի» աբբայի կերպարը կերտելիս,
ինչպես նաև Կայենի մեկնաբանության մեջ, Բայրոնը նկատի է ունեցել ի-
րական հայ կրոնավորների և Կայենի հայկական ընկալումը (թևկուզ այն
բացասելու առումով):

Հալ գրական կյանքի մեջ Բայրոնի մուտքը, ժամանակի հոլովույթի ու
գրական-հասարակական նոր պահանջների հետ ավելի խորն ու բազմակող-
մանի է դարձել՝ հասնելով մինչև մեր օրերը:

Առաջին պահ Բայրոնը ճանաչվել է Մխիթարյանների կողմից, որոնք իրենց
մոտ հայերենն ու հայ մշակույթը ուսումնասիրող բանաստեղծի մեջ տեսել են
նրա մեղմադժությունը, աշխարհի դեմ զայրույթը և անհավասարակշիռ
թվացող բնավորությունը: Նրանք շահագրգռեցին լույս ընծայել այն առաջա-
բանը, որտեղ ասվում էր, որ հայ ժողովուրդը «մի հարստահարված ազգ է»,
որ հայերի «առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թե-
րությունները՝ ճնշման», որ դրախտավայր է եղել Հայաստանը աշխարհի ար-
շալույսին, բայց «և՛ պարսից սատրապները, և՛ թուրքական փաշաները հա-
վասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված ստեղծել էր մար-
դուն ըստ իր հատուկ պատկերի»: Ի դեպ, Բայրոնի գրած այդ առաջաբանը
(որը առաջին անգամ լույս տեսավ Թոմաս Մուրի պատրաստած Բայրոնի կեն-

սագրության ու նամականիի մեջ, 1830-ին) հետադաշում էլ հարկադրյալ կրճատումների է ենթարկվել Պոլսի «Մեղուի» էջերում¹:

Մխիթարյանների հիշյալ վերաբերմունքը Բայրոնի հանդեպ հաղթահարվեց Ղևոնդ Ալիշանի կողմից, որը, բացի «Զալլղ Հարուղի ուխտագնացության» շորսորդ երգից (լույս է տեսել 1860-ին, «Իտալիա» խորագրով), հրատարակել է Բայրոնից կատարած իր թարգմանությունների ևս երկու ժողովածուներ (1852-ին և 1870-ին), որոնցից վերջինը նախորդի կրկնությունը լինելով՝ հարստացել է նաև նոր թարգմանություններով: Ալիշանի ղեկավարմամբ՝ «ոչ ընդ նշանաւորս միայն քերդողաց դարուս, այլև առաջին ի նոսին վկայեալ է ի յուզից գիտնոց՝ Պայրըն անգղիացի»²: Այս մեծարանքով հանդերձ, Ալիշանը լիովին չի բաժանում Բայրոնի կենսահայեցողությունը, նրա «թերահույս ու սակավահավատ» ոգին:

Բայրոնի առաջին թարգմանողներից է նաև Մեսրոպ Թադիագյանը (մեկական բանաստեղծություն «Պարապության ժամեր» և «Հրեական մեղեդիներ» ժողովածուներից), որը բարձր է գնահատել ոչ միայն Բայրոն-գրողին, այլև Բայրոն-քաղաքացուն, Հունաստանի ազատագրության համար պայքարող Միսոլոնգիի հերոսին: Իսկ Սմբատ Շահազիզը մի այլ գիտանկյունից է մոտենում Բայրոնի ստեղծագործությանը: Նա էլ Բայրոնի նման իր երախայրիք ժողովածուն անվանում է «Ազատության ժամեր», իսկ նրա լեռներ՝ «Լեռնի վիշտը» պոեմում, Բայրոնի Հարուղի պես «ուխտագնացության» է գնում՝ իհարկե, իր ժողովրդի հոգսերով մտահոգ: Այստեղ, սակայն, ակնհայտ նմանության հետ կա նաև տարբերիչ մի այնպիսի դիժ, որն իր հերթին հիմք է հանդիսանում երկու հերոսների նպատակային տարբեր միտումների համար: Բայրոնի Հարուղը իր հայրենիքից է հեռանում, թափառում է եվրոպական երկրներում, նորովի է դիտում կյանքը և դառն ճշմարտություններ: ասում բռնակալության ստեղծած իրականության մասին: Իսկ Շահազիզի Լեռները դրսից է գնում հայրենիք՝ նրա վերաբերին իր բալասանը տանելու, հետամտում է առավելապես լուսավորական խնդիրներ:

Հարուղը նմանեցվել է նաև պանդուխտ հային, որ հեռանում է հարազատ վայրերից, «աղեխարշ հրաժեշտ» է տալիս իր «բերկրալից օրրոցին»³: Իսկ տաննամուկակներ անց, մի այլ հայ բանաստեղծ՝ Ռուբեն Որբերյանը, աֆրիկյան տոթակեղ ամիսներից՝ Սոմալիից, Բայրոնի Հարուղին ուղեկից ունենալով՝ ցանկանում է «նոր աստված մը որոնել՝ տառապանքին կարեկից»: Դարասկզբին արտահայտված այդ ցանկությունը («Ծփանքներ» պոեմի նախերգանքում, 1906 թ.) իր պատմական շարժառիթներն ունեն, իսկ Հարուղին դիմելը բխում էր Բայրոնի ստեղծագործության նկատմամբ Որբերյանի ունեցած հոգեհարազատությունից: Իր իսկ խոստովանությամբ («Ամբողջ կյանքիս ընթացքին Պայրըն իբրև բեկոային աստղ զիս առաջնորդած է...»), Որբերյանը տարիներ շարունակ դիմել է Բայրոնի ստեղծագործությանը: Որբերյանի Աղամբ («Աղամբի անեծքը» բանաստեղծության մեջ) բայրոնյան Մանթրեղի և Կայենի նույն աստվածամարտ ոգին ունի: Իր կյանքի վերջալույսին էլ Որբերյանը անդրադարձավ Բայրոնին՝ զրելով իր «Լորտ Պայրըն»:

1 Տե՛ս «Մեղու», 1863, № 183, էջ 2—3:

2 Զ ո Ր Զ Բ ա յ Ր ո ն, Ի տալիա, Վենետիկ, 1860 («Ազգ»):

3 Տե՛ս «Եվրոպա», 1859, № 9, էջ 68:

ուսումնասիրությունը: Նա ճիշտ է գնահատում Բայրոնի ստեղծագործության մեջ առկա թախծի ու ցասման համակցումը՝ այլազան ձևերի մեջ տեսնելով նույն Բայրոնին, «...երկրաքարշ իրականություններն բարձր, միշտ դեպի գերազույն իդեալը — սրբազան ազատության» ձգտողին⁴:

Հայ գրական-գիտական միտքը բազմիցս անդրադարձել է Բայրոնի ստեղծագործությանը: Եղիա Տեմիրճիպաշյանի համար, օրինակ, այդ ստեղծագործությունը անձնական մորմոքի արտահայտություն է⁵: Մանուկ Աբեղյանը Բայրոնի ստեղծագործության մեջ տեսնում է ռոմանտիկական գեղագիտության էական հատկանիշների համադրությունը⁶: Շիրվանզադեն արձանագրում է մարդկային լինելության տարբեր բևեռացումներ⁷: Թումանյանը՝ վիշտ ու բանտված ազատության տվյալտանքներ է տեսնում այնտեղ⁸: Արշակ Զուպանյանը նշել է Բայրոնի ստեղծագործության հախուռն ու ժխտող էությունը⁹:

Բայրոնիզմն ընդհանրապես բավական հարազատ է եղել հայ գրական մտածողությանը: Հույսի և հուսաբեկման, վշտի ու բողոքի միախառնվող զգացումները, որոնք բխում էին մեր անցյալ կյանքի քաղաքական ու սոցիալական անապահով դրությունից, ծնում էին բայրոնական տրամադրություններ: Փիլիպոս Վարդապարյանը Թումանյանի «Դու քո ձամփեն գնա, քույրիկ» բանաստեղծության մեջ տեսնում էր բայրոնա-լերմոնտովյան ազդեցություն: Առարկելով նրան պոետը գրում էր. «Սխալն այն է, որ կարծում ես տողերն են բայրոնա-լերմոնտովյան, ոչ թե ես»¹⁰:

Բայրոնի առանձին երկեր մի բանի թարգմանություն են ունեցել մեզանում: Նրա ստեղծագործությունը հայ գրողների համար սեփական հույզերի ու խոհերի արտահայտման միջոց է դարձել: Բայրոնին թարգմանել են Թումանյանը, Մասիսյանը, Մատուրյանը և շատ ուրիշներ: Մեր օրերում ևս Բայրոնը թարգմանվում և հետազոտվում է: Լույս են տեսել էլիզ Պետրոսյանի և Խաչիկ Դաշտենցի ուսումնասիրությունները, հրատարակվել են Բայրոնի երկերի թարգմանական ժողովածուներ:

Մեծ բանաստեղծի ստեղծագործությանը հատուկ գաղափարական և գեղարվեստական թարմությունը ապահովել է այդ ստեղծագործության հավերժական կյանքը ժամանակի մեջ:

БАЙРОН И АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

(К 150-летию со дня смерти поэта)

В. А. ПАРТАМЯН

(Р е з ю м е)

Творчество Джорджа Гордона Байрона вызвало большой интерес и в армянской действительности. Жизнь и поэзия английского поэта привлекли внимание армян еще в то время, когда Байрон, находясь

⁴ «Թարգմանիկ», 1932, № 4, էջ 181:

⁵ «Երկրագունդ», Պոլիս, 1884, № 2, էջ 79:

⁶ «Նոր դար», 1897, № 48:

⁷ Շիրվանզադե, «Երկերի ժողովածու», հատ. 10, Երևան, 1962, էջ 368:

⁸ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1969, էջ 145:

⁹ «Մուրճ», Թիֆլիս, 1898, № 6, էջ 821:

¹⁰ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1969, էջ 377:

у мхитаристов, на острове св. Лазаря, изучал язык, историю и культуру армянского народа.

Байрон—один из наиболее переводимых на армянский язык авторов. Творчество его нашло свое всестороннее отражение в армянской литературе XIX—XX вв. Начиная со второй половины прошлого столетия, его произведения неоднократно переводились на армянский язык. Поэты-переводчики связывали байроновские свободолюбивые идеи с думами и чаяниями своего народа. Чарльз Гарольд Байрона, как и другие созданные им бунтарские образы, нашли свое специфическое воплощение в произведениях армянских писателей, становясь, в одном случае, проповедниками просветительских идей, в другом—выразителями дум и чаяний армянина-скитальца или поборниками свободы.